ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ՝
ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. *Աշխատակիցի անունը, ազգանունը* - Մեսրոպյան Մեսրոպ.

2. *Զբաղեցրած պաշտոնը* - «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ Գլխավոր տնօրեն:

3. *Գործուղման վայրը և ժամկետները* – Մոլդովայի Հանրապետություն, քաղաք Քիշնև, 2024 թվականի Մայիսի 28-ից 31-ը.

4. Հրավիրող կողմը (առկայության դեպքում)

Մոլդովայի Հանրապետության Էներգետիկայի նախարարություն:

5. *Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)*

Հայաստանի Հանրապետության և Մոլդովայի Հանրապետության միջև էներգետիկայի ոլորտում նոր կապերի հաստատում և երկու երկրների էներգետիկայի ոլորտում ունեցած դրական փորձի փոխանակում:

6. Քննարկված թեմաները (հարցերը).

Մոլդովայի Հանրապետության Էներգետիկայի նախարար Վիկտոր Պարլիկովի և «Մոլդէլեկտրիկա» ՊՁ ի գլխավոր տնօրեն Սերջիու Ապարատուի հետ մտքեր փոխանակեցինք էներգետիկայի ոլորտում հնարավոր համագործակցության և համատեղ նախագծերի իրականացման շուրջ:

Ներկայացրել եմ ՀՀ ազատականացված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մոդելը, շուկայի զարգացման հեռանկարները, մինչ օրս առաջ եկած խնդիրները և

այդ խնդիրների հաղթահրման ուղիները: Ծանոթացել եմ Մոլդովայի էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ազատականացման ռեֆորմի ընթացքին:

Մոլդովացի գործընկերները ներկայացրել են վերջին տարիներին Մոլդովայի հանրապետության էներգետիկայի դիվերսիֆիկացման գործընթացը և արդյունքները: Գործընթացի հիմնական նպատակներից է եղել նվազեցնել Մոլդովայի էներգետիկայի կախվածությունը ներկրվող էներգակիրներից, էներգետիկական նոր ենթակառուցվածքների ստեղծումը, ոլորտի կառավարման կառուցվածքային փոփոխությունները և ինտեգրումը դեպի եվրոպական էլեկտրաէներգետիկական շուկա:

Ներկայացվեց Մոլդովայի էներգետիկ ոլորտի մարտահրավերները:

Առաջարկեցի որ հայկական ընկերությունների փորձագիտական կարողությունները կարող են նպաստել Մոլդովայի էլեկտրահաղորդման ցանցի օպտիմալացմանը ու արդյունավետության բարձրացմանը:

7.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Մոլդովայի Էներգետիկայի նախարար Վիկտոր Պարլիկովին փոխանցեցի ՀՀ ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանի՝ Հայաստան այցելելու հրավերը, ինչին պարոն Պարլիկովը դրական արձագանքեց: :

Գործուղվող՝

Մեսրոպ Մեսրոպյան ----------

(ստորագրությունը, ամսաթիվը)